ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

ի պատասխան Ձեր 19.09.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացվում է, որ խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից Երվանդ Քոչարի փողոցի հ.15 հասցեում կատարված ուսումնասիրության արդյունքում կոյուղագծի խցանումը հնարավոր չի եղել վերացնել, քանի որ կոյուղագիծը գտնվում է վթարային վիճակում:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրի կարևորությունը, Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից համատեղ միջոցներ են ձեռնարկվում՝ նշված կոյուղագիծը վերակառուցելու համար:

Աշխատանքները նախատեսվում են ավարտին հասցնել 30 օրվա ընթացքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ